# ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՍԵՍԻԱՆ

(ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ)

Օգոստոսի 27-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի բիոլոգիական և գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքների միացյալ սեսիան շարունակում էր իր աշխատանքը։

Վ. Ի. Լենինի անվան Գյուղատնտեսական Գիտությունների Համամիութենական Ակադեմիայի օգոստոսյան սեսիայի արդյունքների մասին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գենետիկայի ինստիտուտի դիրեկտոր, բիոլոգիական գիտությունների թեկնածու Գ. Բաբաջանյանի զեկուցման առթիվ սկսված մտքերի փոխանակության ժամանակ հանդես եկան Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրի տեղակալ Բ. Գարասեֆելյանը, բիոլոգիական գիտությունների թեկնածու Ս. Պողոսյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Թամամշևը, բիոլոգիական գիտությունների թեկնածու Հ. Բատիկյանը, գիտության վաստակավոր գործիչ Ա. Արաբատյանը, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Խ. Մոմջյանը, բիոլոգիական գիտությունների թեկնածու Վ. Ղազարյանը, ավագ գիտական աշխատող Ս. Բագրատյանը, բիոլոգիական գիտությունների թեկնածու Գ. Դավիդովսկին։

Սեսիան իր աշխատանքը շարունակում է։

(ՀՀԳ)